

այլ եւ ուխտիւ գնալ նախ յաստուածակոխ քողաքն սուրբ Երուսաղէմ. . . . եւ անտի գնալ ի Մուշ. . . . եւ ապա ի մեծն Հռոմ» (Ուղ. 2) :

Ի վաղուց իւր մէջ սնուցած այս փափագը կը ձեռնարկէ իրականացնել երբ կը հասնի իւր քսանուչորրորդ հասակին : Առոյգ երիտասարդական հասակս կը սիրէ բախտախնդիր ձեռնարկութիւններ : Տակաւին չէր ամուսնացած Սիմէոն, չունէր ընտանեկան որ եւ իցէ կապ, որ կաշկանդէր զինքը տան : Հայրենի ստացուածները կու տայ վարձու. եւ վստահ իւր գրադիտութեան վրայ կ'առնէ պանդխտութեան ցուպը թափառելու իրրեւ ուխտաւոր աշխարհէ աշխարհ :

«Արդ ի թվին Հայոց ՌԾԷ (1608) փետրուարի ԺԵ. աղուհացից յերկրորդում շարաթի՝ օրն երկուշարթի³, կամօք եւ դօրութեամբ ամենակարօղին Աստուծոյ, ապաւինեալ ի Հողին սուրբ Աստուած ճշմարիտ Էլի ի Լովայ մայրաքաղաքէն՝ լեալ ամաց ԻԴից. եւ մտայ ես ի ճանապարհ» (Ուղ. 3—4) :

Ճանապարհը կը հանէ զինքը Մուշուա, ուր կը յուսար խառնուիլ դէպի Կ. Պոլիս գացող կարաւանի մը. մտադիր էր Կ. Պոլսէն նաւով մեկնիլ Երուսաղէմ : Երկու ամիս եւ երկու շաբաթ կը ստիպուի սպասել ի Մուշուա : Դէպի Կ. Պոլիս ուղեւորող արքունի դանձատար կարաւանի մը կցուելով Եաշ-

³ 1608ին փետր. 15 ճշգիւ կ'իյնար երկուշարթի օր : Ա՛յտլէս իմացիր Հանդ. Ամս., 1932, ծան. 4 :